ԿԱՐԾԻՔ

Բենիկ Ալեքսանդրի Երիբեկյանի ,,Իրականության եվ տեղեկատվության ձևախեղմանն ուղղված մանիպուլյացիայի ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա,, թեմայով ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության:

Ժամանակակից տեղեկատվական տեխնալոգիաների (ՏՏ) սրընթաց զարգացման և դրանց լայնորեն կիրառման պայմաններում ամենատարբեր նպատակներով օգտագործվող մանիպուլյացիայի երևույթը լայնորեն քննարկման և ուսումնասիրման առարկա է հանդիսանում մարդաբանական գիտությունների գիտնականների կողմից (մանկավարժական գիտություններ,էթիկա, քաղաքականություն, մշակութաբանություն, սոցիոլոգիա, հոգեբանություն և այլն): Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսական, ռազմաքաղաքական,սոցիալ-հոգեբանական, մշակութային և բազմաթիվ այլ բնագավառներում կրթական, տեղեկացվածության, զարգացվածության մակարդակը օրեցօր աճում է, որոնց շնորհիվ մարդիկ դառնում են անհամեմատ ինքնուրույն, կառավարելիության առումով՝ ավելի ու ավելի բարդ: Հատկապես քաղաքականության, առևտրի, գովազդի և բազմաթիվ այլ բնագավառներում զանգվածների լայն շրջանակների ուշադրությունը որոշակի երևույթների վրա ուղղելու նպատակով լայնորեն կիրառվում են մանիպուլյատիվ տեխնալոգիաներ:Սակայն դրանց կիրառման արդյունքում հաճախ շատ թվով մարդիկ, կորպորացիաներ, մեծ հիմնարկություններ, անգամ երկրներ դառնում են մանիպուլյատիվ գործընթացների իսկական զոհ: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն են ստանում մանիպուլյատիվ գործընթացի ճշգրիտ և հմուտ կազմակերպումը, համապատասխան մեխանիզմների և առանձին հնարքների օգտագործումը: Այս ամենի իմացությունը թույլ է տալիս որոշակի վերահսկողություն սահմանել մանիպուլյատիվ օբյեկտի նկատմամբ՝ համապատասխան, ցանկալի ուղղվածություն տալով վերջինիս գործողություններին:

Հիմնախնդրի արդիականությունը և կարևորությունը պայմանավորված է ժամանակակից հասարակություններում կիրառվող մանիպուլյատիվ տեխնոլոգիաների կործանարար հետևանքներիր ուսումնասիրման անհրաժեշտությամբ, բացասական երևույթների կանխարգելման պահանջներով: Տարբեր կազմակերպությունների կողմից մանիպուլյատիվ տեխնոլոգիաների անբարեխիղճ օգտագործումը հաճախ ուղղված են հասարակության բարոյական չափանիշների ոչնչացման, արժեքների և առաջավոր գաղափարների վերափոխման, իրականության ձևախեղման նպատակների: Ժամանակակից տեղեկատվական տեխնալոգիաների լայն կիրառման պայմաններում մարդկանց տեղեկացվածությունը, տեղեկության նկատմամբ գրագետ վերաբերմունքը կարող է նրանց շատ տեսանելի ու քողարկված սպառնալիքներից, վտանգներից ազատել: Ուստի, Բ.Երիբեկյանի ,,Իրականության եվ տեղեկատվության ձևախեղմանն ուղղված մանիպուլյացիայի ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա,, թեմայով ատենախոսական աշխատանքը, որը ուղղված է մանիպուլյացիայի հիմնախնդրի ուսումնասիրմանը, ավելի քան կարևոր է և նարկայացված ժամանակին:

Աշխատանքը բաղկացած է 3 գլուխներից, ներածությունից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից, 14 աղյուսակներից և 8 գծապատկերից: Ընդհանուր ծավալը կազմում է 141 տպագիր էջ:

Ատենախոսական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել մանիպուլյացիայի ներգործությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա իրականության վերաբերյալ տեղեկատվության ձևախեղման համատեքստում՝ կապված կոգնիտիվ ոլորտի ոճերի և առանձնահատկությունների հետ: Նպատակի իրականացման համար հեղինակը առաջադրել է մի շարք տեսական և կիրառական ուղղվածության խնդիրներ, որոնք հիմնավորվում են գիտական աշխատանքների լայն քննարկումներով, վերլուծություններով, ինչպես նաև էքսպերիմենտալ հետազոտությունների միջոցով: Աշխատանքի հայեցակարգային հենքը հանդիսանում է բնագավառում ճանաչված գիտնականների առաջավոր գաղափարները: Դրանցում առանձնակի կարևորվում են Ֆ. Զիմբարդոյի, Ռ. Չալդինիի հոգեբանական

ներգործության, Դ. Մայերսի սոցիալական զանգվածների վրա մանիպուլյատիվ ազդեցության, Գ. Շիլլերի գիտակցության մանիպուլյացիայի, Ա. Նալչաջյանի, Ե. Դոցենկոյի մոտեցումներն ու ներկայացրած հիմնադրույթները մանիպուլյատիվ զանգվածային սոցիալ-հոգեբանական ներգործության առանձնահատկությունների, Ռ. Ուիտկինի, Ջ. Կագանի, Վ. Կոլգայի գիտամեթոդական աշխատությունները կոգնիտիվ ոճերի, արտաքին միջավայրային ազդեցություններից կախվածության, Ջ. Ռոտտերի հայացքները սոցիալական վստահության վերաբերյա գաղափարները:

Ուսումնասիրությունների օբյեկտը հանդիսանում է զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործությունը կոգնիտիվ ոճերի համատեքստում: Առարկան՝ զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործության և կոգնիտիվ ոճերի համահարաբերակցությունը: Առաջադրված խնդիրների լուծման նպատակով ընտրված հետազոտական մեթոդների համալիրը իր կիրառական արդյունավետությամբ, տեղեկատվությամբ ու հետազոտական աշխատանքների կազմակերպման գիտականության պահանջներով հանդիսանում է լավագույն մարտկոց, որի արդյունքները հաջողությամբ կարող են հաշվարկվել ժամանակակից վիճակագրական ճշգրիտ մեթոդներով: Հետազոտության համակազմում ներառված են ՀՀ ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչներ, որոնք ներկայացնում են հանրապետության գրեթե բոլոր շրջանները, ինչը հնարավորություն է տալիս ամբաղջական պատկերացում կազմելու հիմնախնդրի դրվածքի և ասենախոսության մեջ առաջադրված խնդիրների իրականացման նպատակահարմանության և պահանջարկված լինելու վերաբերյալ:

Ատենախոսական աշխատանքի ներածության բաժնում արտացոլված դրույթները կառուցված են գրագետ գիտական լեզվով, ամբողջությամբ արտացոլում են խնդրո առարկայի բովանդակային պահանջները, խնդիրների առաջադրման, դրանց ձևակերպման և լուծման տրամաբանական բովանդակությունն ու դրանց իրականացման նպատակահարմար հաջորդականությունները: Աշխատանքի նպատակը, լուծվելիք խնդիրների համալիրը, պաշտպանության ներկայացվող դրույթները բխում են ատենախոսության վարկածի պահանջներից: Ներածության

բաժնում տեղ գտած ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը, տեսական, կիրառական նշանակությունը հիմնավորված են հետազոտական աշխատանքներով, որոնք բխում են պաշտպանության ներկայացվող դրույթների պահանջներից: Ներկայացվում են տեսական և հետազոտական աշխատանքների իրագործման 4 փուլերն ու դրանցում իրականացվող աշխատանքների բովանդակությունը, հետազոտության մեթոդները, համակազմն ու աշխատանքների իրագործման ռազմավարությունը:

Ատենախոսական աշխատանքի մանիպուլյացիայի ուսումնասիրման տեսական հիմքերը առաջին գլխում ներկայացվում են սոցիալական հոգեբանության բնագավատում մանիպուլյացիայի վերաբերյալ բիհեվիորիստական ուղղության, Ի.Պ.Պավլովի բարձրագույն նյարդային գործունեության ուսմունքը, հոգեվերլուծության, սոցիոմշակութային և այլ ուղղություններում մանիպուլյացիայի հոգեբանական բնութագրերը, երևույթի պատմականության, էվոլյուցիոն զարգացումների, գիտական կողմերի, դրա ձևափոխությունների սոցիալ-հոգեբանական, ինչպես նաև լեզվագիտական, քաղաքագիտական հիմնախնդիրներում դրսևորման առանձնահատուկ ձևերը:

Մանրակրկիտ վերլուծությունների միջոցով ներկայացվում են մանիպուլյատիվ ներգործության վերբալ, և ոչ վերբալ, ինչպես նաև պարավերբալ միջոցները, որոնք հաղորդակցման մաս են կազմում և իրենց մեջ պարունակում անձի վրա ներգործելու որոշակի պաշարներ: Ներկայացվում են մանիպուլյացիայի գործընթացում ուղղորդված տեղեկատվության ներգործության հոգեբանական մեխանիզմները, փոփոխության արդյունքում անձի հոգեբանական բնութագրերը: Աշխատանքում հեղինակը մանիպուլյացիան սահմանելիս հենվում է Է.Լ.Դոցենկոյի ձևակերպման դրույթների վրա, համարելով այն որպես հոգեբանական ազդեցության տեսակ, որի հմուտ կատարումը հանգեցնում է մեկ այլ անձի մտադրությունների և դիրքորոշումների վերափոխմանն այնպես, որ դրանք չհամընկնեն անձի իրական ցանկությունների հետ:

Այնուհետև ներկայացվում են անձի և սոցիալական խմբերի վրա սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության դրսևորումները, զանգվածային

սոցիալ-հոգեբանական երևույթներում դրանց ներգործության առանձնահատկությունները, սոցիալ-հոգեբանական մեխանիզմները: Մանիպուլյացիաների ընթացքում կիրառվող տեղեկատվական տեխնալոգիաները դիտարկվում են որպես թաքնված ազդեցության գործընթացներ, որոնցում հաղորդակցումը ուղղորդվում է այն ճանապարհով, որը հաճախ չի համընկնում մասնակից անձանց սեփական ցանկությունների հետ;

,,Մանիպուլյացիաները և սոցիալ-հոգեբանական երևույթները,, երկրորդ տեսական գլխում քննարկվում են մանիպուլյացիաների ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա, որում կարևորվում են համոզումը, մարդկանց դիրքորոշումները, հույզերն ու ըմբռնման առանձնահատկությունները: Սոցիալական առումով, կարևորվում են խմբային, էթնիկական, ազգային, ,,մերոնք - նրանք,, հասկացությունների շրջանակներում իրականացվող ազդեցությունները և այլն: Առանձնակի կարևորվում են մշակութային և ուրիշ կարևորություն հանդիսացող արժեքների, ինչպես նաև նարցիցիզմի, անձնային ,,ես ,,կոնցեպցիայի, մոտիվային գործոնների առանձնահատկությունները ,որպես մարդկանց զգայուն կողմերի ,,ցավոտ կետերի,, վրա ազդեցությունների հնարավորություն: Նմանատիպ ազդեցությունների հոգեբանական հիմնավորումները իրականացվում են հիմնվելով բնագավառներում հանրահայտ գիտնականների աշխատությունների վերլուծականների, դրանցում գոյություն ունեցող տեսական և կիրառական առաջավոր գաղափարների վրա:

Մասնագիտական գրականության վերլուծությունների արդյունքում Բ.Երիբեկյանը հանգում է այն եզրակացության, որ անկախ խոսքային մանիպուլյատիվ հնարքի տեսակից և դրանց առանձնահատկություններից՝ մանիպուլյատիվ գործընթացի հիմքում ընկած է անձի ինքնագնահատականի, սեփական ռեֆերենտային խմբում ընդունված լինելու, ,,ես-կոնցեպցիայի,, գաղափարների համապատասխան փոփոխությունները: Այնուհետև հեղինակը անդրադառնում է անձի հոգեբանական անվտանգության պահանջմունքային գործոնի շրջանակներում տեղի ունեցող ազդեցության մեխանիզմների բացահայտումներին, դրանց հոգեբանական վերլուծություններին: Ատենախոսի վերլուծությունների արդյունքում արված հետևության

համաձայն, սոցիալական անկայունության, անորոշության, լարվածության պայմաններում, առաջին պլան է մղվում, մասնավորապես հոգեբանական անվտանգության պահանջմունքը: Վերջինիս բավարարման գործընթացը հաճախ արհեստականորեն տեղի չի ունենում, ինչը հնարավոր է դարձնում պահպանել հանրային լարվածությունը, տագնապայնությունը, որը բարենպաստ պայմաններ է ստեղծում մանիպուլյատիվ ներգործության իրականացման համար: Նման պայմաններում անձը կարիք է ունենում որոշակի տեղեկույթի օգնությամբ բավարարել սեփական իմացական բացը, որը հնարավոր է դարձնում նաև նվազեցնել տագնապայնության մակարդակը: Այստեղ է, որ առանձնահատուկ մանիպուլյատիվ ներուժ են ձեռք բերում, այսպես կոչված, փորձագիտական կարծիքները:ահեղինակը կարևորում է ասեկոսները, շշուկները, որոնք միջնորդավորված և անմիջական կերպով ազդեցություն են ունենում մարդկանց, զանգվածների, հասարակության գիտակցության վրա: Այս տեսանկյունից հեղինակը մեծ տեղ է տալիս կոգնիտիվ դործընթացներին, դրանց դրսևորման առանձնահատկություններին: Հատկապես կարևորվում են խմբային, հասարակական մտածողության և գիտակցության ձևավորման գործում առանձնակի կարևորություն հանդիսացող հասկացությունների հոլովումը: Անդրադարձ է կատարվում զանգվածային հոգեվիճակների, լարվածության ,անտարբերության, հիասթափության պայմաններում մարդկանց գիտակցության մանիպուլյացիաների, որոշակի գաղափարների ներդրման, նրանց կառավարման ուղղությամբ իրականացվող մանիպուլյատիվ տեխնալոգիաների կիրառման հոգեբանական վերլուծություններին: Ամփոփելով, հեղինակը հանգում է այն գաղափարին, որ գաղափարախոսական և քաղաքական համակարգերի ճգնաժամային փուլերում, որտեղ դեռևս ուրվագծված չէ որևէ կոնկրետ արժեքային համակարգ, տարբեր նպատակներով ակտիվորեն կիրառվում են մանիպուլյատիվ տեխնոլոգիաներիհամակարգեր:

Քաղաքական ոլորտում մանիպուլյատիվ ներգործության կազմակերպման մեջ առանձնացվում են, դրանց այսպես կոչված, հոգեբանական և ռացիոնալ ձևաչափերը: Մանիպուլյատիվ օբյեկտի և սուբյեկտի փոխհարաբերություններում կապված կոնկրետ

նպատակի և գործունեության ոլորտի հետ, նշվում են մի քանի հիմնական առանձնահատկություններ: Հիմնական միջոց այստեղ հանդես է գալիս տեղեկույթը, որի հետ էլ կապված, իրականացվում են հիմնական մանիպուլյատիվ օպերացիաները: Խոսքը գնում է հիմնականում տեղեկատվության ամբողջական ձևախեղման գործընթացի մասին:

Որպես առանձին խնդիր, հեղինակը առանձնացնում է նաև սոցիալական կարծրատիպերի ինքնաբուխ կամ նպատակային ձևավորման խնդիրը, ինչպես նաև կարծրատիպերի փոփոխելիության հարցը: Նշվում է, որ չնայած այն տպավորությանը, որ սոցիալական կարծրատիպերը կա՛մ ենթակա չեն փոփոխության, կա՛մ դժվար փոփոխելի են, այնուամենայնիվ դրանց կարծրատիպերը զգայուն են հատկապես նոր տեղեկույթի նկատմամբ, հատկապես երբ վերջինս լուրջ հակասությունների դաշտ է ստեղծում նախկինում եղած կարծրատիպերի համատեքստում:

Այնուհետև Բենիկ Երիբեկյանը անդրադառնում է մանիպուլյատիվ ներգործության մեթոդների բնութագրումական վերլուծություններին: Ըստ հեղինակի, սեղեկատվական հասարակության մեջ մանիպուլյացիան ձեռք է բերում իսկապես համընդհանուր բնույթ: Միևնույն ժամանակ, նշում է որ ինքնին մանիպուլյացիան, ինչպես նաև մանիպուլյատիվ խոսքը մասնավորապես, միշտ եղել և մնում են հաղորդակցման գործընթացում ազդեցության լրացուցիչ աղբյուր՝ որպես հաղորդակցի սոցիալական դիրքի օրինականության կամ դրա պահանջների լեգիտիմացման լրացուցիչ միջոց: Ժողովրդավարության պայմաններում, որտեղ առաջ են գալիս գլոբալիզացիոն գործընթացներ, մշակութային և սոցիալական կարծրատիպերը դառնում են փոփոխությունների ենթակա: Ըստ այդմ, հաղորդակցման մասնակիցները հայտնվում են մրցակցային բարդ սոցիալ-հոգեբանական պայմաններում և, օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, հաճախ դիմում են մանիպուլյացիայի քողարկված ձևերի:

Այնուհետև անդրադարձ է կատարվում մոնիթորինգի նշանակելիության գնահատմանը, դրա դերի և նշանակության մեկնաբանումներին, որպես մանիպուլյատիվ ազդեցության միջոցի, ինչը հնարավորություն է տալիս արտացոլել

սոցիալ-մշակութային միջավայրը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների միջոցով: Մոնիթորինգն այժմ իրականացվում է համակարգչային ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով, ինչը հնարավորություն է տալիս ոչ միայն մշակել և հսկայական տեղեկատվություն փոխանցել զանգվածային լսարանին՝ հաղթահարելով գրեթե անսահման հեռավորություններ և ժամանակավոր խոչընդոտներ, այլև ազդեցություն ունենալ անձի ճանաչողության գործընթացի վրա՝ ստիպելով նրան մտածել սովորականից տարբերվող կատեգորիաներով, փոխելով նրա տեսակետները իրականության վերաբերյալ:

Հեղինակն անդրադառնում է նաև զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա մանիպուլյատիվ ներգործության մի շարք հնարքների բնութագրերին, որոնք նպաստում են տեղեկատվության աղավաղված ընկալմանն ու մտապահման գործընթացներին: Մասնավորապես, առանձնացվում է լայն կիրառություն ստացած «ջախջախիչ» տեղեկատվության հաղորդման հնարքը, որում ակնառու դրսևորվում է տեղեկատվության հուզական երանգների խտացում, գնահատողական դատողությունների միակողմանիություն, ինչպես նաև՝ տեղեկատվության անհապաղ բնույթի շեշտադրում և «փոքր բաժիններով» հասարակությանը տեղեկատվություն տրամադրում: Ըստ հեղինակի, Տեղեկատվության այդպիսի ներկայացումը բարդացնում է գործընթացի կամ երևույթի հայեցակարգային ընկալումը, ինչը հանգեցնում է տեղեկատվության հանդեպ սոցիալական վստահության աստիճանի և հետաքրքրության նվազմանը: Մանիպուլյատիվ ներգործության ևս մի ազդեցիկ հնարք, որում բաց են թողնվում տեղեկատվության այն մանրամասները, որոնք դիտավորյալ թաքցվում են մանիպուլյատորի կողմից՝ նպատակ ունենալով խեղաթյուրելու իրականությունը կամ շեշտադրումներ կատարելու սոցիալական ընկալումներում: ներկայացվում է նաև «Լռության» տեխնիկայի օգտագործումը , որըհնարավորություն է տալիս նաև ծրագրավորել մարդկանց մեծ զանգվածների վարքը և հակազդման մեխանիզմները:

Այնուհև Բ. Երիբեկյանը ներկայացնում է ժամանակակից պայմաններում գործունեության տարբեր ոլորտներում գոյություն ունեցող մանիպուլյացիայի

տեսակները, դրանցում կարևորվում են զանգվածային լրատվական միջոցների դերն ու նշանակությունը, որոնք համարվում են այդ գիտելիքների և ինֆորմացիայի կրողն ու փոխանցողը: Այնուհետև կարևորվում են ԶԼՄ-ների գործառույթներն ու դրանց նշանակությունը,որպես սոցիալական իրականության ձևավորող, իշխանության կարևորագույն ռեսուրս, հիմքում դիտարկելով ներշնչանքը, որպես: զանգվածների գիտակցության վրա իրականացվող մանիպուլյատիվ ներգործությանհիմնական միջոց: Դրանցում հեղինակը առանձնակի կարևորում է խոսքը՝ ՝ լինի դա գրավոր, թե բանավոր: Այս գործընթացում հեղինակը մանիպուլյացիան դիտարկվում է որպես յուրօրինակ փիլիսոփայություն, որը հիմնականում միտված է զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների կառավարման և վերահսկման գործընթացի իրականացմանը:

Ատենախոսական աշխատանքի „Փորձարարական հետազոտության կազմակերպումը եվ արդյունքների վերլուծությունը գլուխը„ նվիրված է առաջադրված խնդիրների էքսպերիմենտալ լուծումներ տալուն: Այս գլխում հեղինակը ներկայացնում է ատենախոսության վարկածից բխող խնդիրների շարքը, հետազոտության իրականացման ռազմավարությունը, ընտրանքի խմբերը ըստ տարիքային և սեռային առանձնահատկությունների, հետազոտության կազմակերպման փուլերն ու կիրառվող հետազոտության մեթոդներն ու դրանց կիրառման յուրահատուկ առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալների հաշվարկման ու կատարվող վերլուծությունների մեթոդաբանությունը: Հարկ է նշել, որ հետազոտական աշխատանքներն ու դրանց արդյունքների հոգեբանական վերլուծությունները աչքի են ընկնում յուրաքանչյուր գործոնի մանրակրկիտ հաշվառման նրբանկատությամբ, վիճակագրական վերլուծություններում թվային արժեքների նկատմամբ մասնագիտական բարձր գիտելիքների դրսևորման հմտություններով: Հետազոտության արդյունքների վերլուծման գործընթացում մեկնաբանումներ իրականացնելիս անդրադարձ է կատարվում հիմնախնդրով զբաղվող գիտնականների աշխատանքներին, որոնց հեղինակային մտքերն ու գաղափարները մեջբերելիս պահպանվում են գիտական անհրաժեշտ էթիկան: Հետազոտության արդյունքները

խնամքով արտացոլված են համապատասխան աղյուսակներում, հիստագրամներում, նկարներիտեսքով, ինչպես նաև դիագրամներում: Հետազոտության արդյունքների հիման վրա արվող հետևություններն ու եզրակացությունների ձևակերպումները արված են գրագետ գիտական լեզվով, որոնք արտացոլում են նախատեսնված խնդիրների լուծման բոլոր պահանջները: Ատենախոսական աշխատանքը ամփոփվում է տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում արված եզրակացություններով, օգտագործված գրականության ցանկով (1 հատ հայերեն, 106 աղբյուր ռուսերեն և 132 աղբյուր անգլերեն) և դրանց հիման վրա կատարված գործնական առաջարկություններով և հանձնարարականներով: Հետազոտությունների արդյունքում բացահայտվել են մի շարք օրինաչափություններ, որոնց հիման վրա Բենիկ Երիբեկյանի կողմից արվել են համապատասխան եզրակացություններ:

Ընդհանուր առմամբ, ատենախոսական ախատանքը ինքնուրույն, ավարտուն աշխատանք է: Այն աչքի է ընկնում իր արդիականությամբ ու կիրառական նշանակությամբ, առաջադրված խնդիրների հստակությամբ, ու դրանց լուծման գիտականությամբ: Տեսական վերլուծություններն ու հետազոտության գործընթացի իրականացման գիտական բարձր կուլտուրան խոսում են Բենիկ Ալեքսանդրի Երիբեկյանի մասնագիտական հասունության մասին: Կատարված տեսական և հետազոտական աշխատանքների ողջ տրամաբանությունը բխում է ատենախոսության առաջադրված նպատակի և խնդիրների իրագործման գիտական պահանջներից: Կատարված աշխատանքների բարձր որակն ու արդյունքների վերլուծման գիտականությունը խոսում է հեղինակի մասնագիտական պատրաստվածության և հասունության մասին:

Չնայած այդ ամենին, աշխատանքում առկա են որոշ տեխնիկական բացթողումներ և թերություններ, որոնց վերաբերյալ կուզեինք նշել:

1. Հետազոտության արդյունքների արժեքային ցուցանիշները դիագրամներում և որոշ աղյուսակներում ներկայացվում են անգլերեն, որը ձևական առումով լեզվական անհարկի կոնտրաստ է ստեղծուում հայերեն գրված ատենախոսական աշխատանքի տեքստի և դիագրամներում, աղյուսակներում

տեղ գտած անգլերեն ներկայացված հասկացությունների արդյունքների ընկալման մեջ:

2. Չնայած ատենախոսական աշխատանքի եզակիությանը, կարծում ենք, որ ատենախոսական աշխատանքում բաց է մնացել գործնական առաջարկությունների հարցը:: Խնդիրը կայանում է նրանում, որ մենք բոլորս ապրում ենք ժամանակակից տեղեկատվական տեխնալոգիաների պայմաններում և գրեթե յուրաքանչյուր պահի առնչվում ենք մանիպուլյացիաների ազդեցության: Այս տեսանկյունից՝ համոզված ենք, որ ժամանակակից ՏՏ-ի կիրառման պրեսինգի պայմաններում հոգեբանական անվտանգության ապահովման, հոգեկան առողջության պահպանման ու բացասական երևույթների կանխարգելման նպատակով ավելորդ չէր լինի հեղինակի կողմից գործնական առաջարկությունների և համապատասխան հանձնարարականների առաջադրումը:
3. Քանի որ ատենախոսական աշխատանքն ուղղված է մանիպուլյացիոն տեխնալոգիաների ազդեցությանը, կարծում ենք որ բացի դրանց ազդեցության հետևանքները, որպես սոցիալական երևույթների փոփոխություն, կամ սոցիալական նոր երևույթների առաջացման հիմնական գործոն, դրանք պետք է ազդեցություն ունենային հետազոտվող խմբերի հասարակական գիտակցության, կոգնիտիվ գործընթացների, հոգեկան ոլորտի մյուս համակարգերի, ընդհանուր վարքագծի փոփոխությունների բնութագրերի վրա: Կարծում ենք, որ անտեսված են նաև այս երևույթների ուսումնասիրությունները:

Համոզված եմ, որ արված դիտողություններն ու ցանկությունների մակարդակում արված առանձին մեկնություններ բոլորովին չեն ստվերում ատենախոսության գիտական նշանակությունը, տեսական և հետազոտական աշխատանքների վերլուծման պրոֆեսիոնալիզմը, ստացված արդյունքների հավաստիությունն ու եզրակացությունների հիմնարարությունն ու կարևորությունը:

Եզրակացություն

1. Բենիկ Ալեքսանդրի Երիբեկյանի ,,Իրականության եվ տեղեկատվության ձևախեղմանն ուղղված մանիպուլյացիայի ազդեցությունը զանգվածային սոցիալ-հոգեբանական երևույթների վրա,, թեմայով ԺԹ.00.03 – «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք: Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը համառոտ արտացոլված է նաև սեղմագրում և դրանցում ներկայացված գիտական խնդիրների ձևակերպումներն ու բովանդակությունը համահունչ են միմյանց:

2 Ատենախոսական աշխատանքը իր բովանդակությամբ, տեսամեթոդական, գիտական վերլուծությունների խորությամբ, առաջադրված հետազոտական խնդիրների ինքնատիպ լուծմամբ և գիտական եզրակացությունների ձևակերպմամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսական աշխատանքներին ներկայացվող աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին:

3. Ատենախոսության հեղինակ Բենիկ Ալեքսանդրի Երիբեկյանը իր գիտական հասունությամբ, ներկայացրած գիտական բարձր մշակույթով հագեցած, գիտագործնական մեծ կարևորություն ունեցող ատենախոսության համար արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Հոգ. գիտ դոկտոր, պրոֆեսոր Մ. Մկրտումյան

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ի գիտքարտուղար Մ. Իսպիրյան

Մ.Պ.Մկրտումյանի ստորագրությունը հաստատում եմ:

15.0